տուրայի շնորհիվ նրանք փրկվեցին մահվան սպառնալիքից։

Եվ այժմ դեռևս արտասահմանյան շատ երկրներում, առանձնապես Թյուրքիայում, Հունաստանում, Իրանում հայերը զուրկ են տարրական ազատությունից, քաղաքական ու քաղաքացիական տարրական իրավունքներից, հաճախ հետապնդման ու հալածանքի ենթարկվելով ռեակցիոներների և տեղական իշխանությունների կողմից։

Այս է մեր արտասահմանյան եղբայրների վիճակը։

Միայն Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայի հաղթանակը և Հայաստանում սովետական իշխանության հաստատումը արտասահմանյան հայերի սրտերում ռեալ հույս ներշնչեցին հայրենիք վերադառնալու մասին։ Հազար անգամ իրավացի էր ընկեր Ստալինը, երբ դեռևս 1918 թվի հունվարին գրում էր, որ «այժմ ամենքի համար պարզ է, որ Ռուսաստանի ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի բախտը սերտորեն կապված է Հոկտեմբերյան ռևոլուցիայի բախտի հետ»։

Սովետական իշխանության շնորհիվ, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնության շնորհիվ, Համկ(բ)Պ Կենտկոմի, Սովետական Կառավարության և անձամբ ընկեր Ստալինի ամենօրյա հոգատարության շնորհիվ հայ ժողովուրդը, Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի ղեկավարությամբ իր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը դարձրեց ծաղկուն երկիր, կարգացած արդյունաբերություն, առաջավոր գյուղատնտեսություն և ծաղկող կուլտուրա, գիտություն ու արվեստ ունեցող երկիր։

Հենց դրա շնորհիվ Սովետական Հայաստանը այժմ հնարավորություն ունի ընդունելու և աշխատանք տալու տասնյակ հազարավոր բազմաշարշար զավակներին։

Այսօր մենք հրապարակում ենք Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի որոշումը ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե կազմակերպելու մասին։

Ճիշտ է, Սովետական Հայաստանը հասկանալի պատճառներով, այժմ կարող է ընդունել օտարության մեջ ապրող իր զավակների և դուստրերի մի մասը միայն։ Բայց այն անսահման խանդավառությունը և ուրախությունը, որով մեր ռեսպուբլիկայի աշխատավորները ընդունեցին ՍՍՌ Միության Ժողկոմսովետի որոշումը, ցույց է տալիս, որ նրանք պատրաստ են գրկաբաց ընդունելու իրենց արյունակից եղբայրներին և քույրերին։

Մեր ռեսպուբլիկայի պարտիական, սովետական և հասարակական կազմակերպությունների առաջ, ամբողջ աշխատավորության առաջ կանգնած է պատասխանատու, ոչ հեշտ, բայց շնորհակալ խնդիր բարձր կազմակերպվածությամբ նախապատրաստվել և իրագործել քաղաքական հսկայական կարևորություն ունեցող՝ Սովետական Կառավարության որոշումը։

Մեր ռեսպուբլիկայի յուրաքանչյուր աշխատավոր, յուրաքանչյուր հայրենասեր պետք է բազմակողմանի օգնություն ցույց տա հայրենիք վերադարձող մեր հայրենակիցներին ընդունելու և տեղավորելու գործին։

Բարի գալուստ իրենց ազատ, երջանիկ սոցիալիստական հայրենիք վերադարձող մեր հարազատ եղբայրներին։

(«Սովետ. Հայ.» դեկտ., № 264, 1945 թ.)

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՍՍՌՄ Ժողկոմսովետի պատմական որոշումը արտասահմանի հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին Հայաստանի աշխատավորներն ընդունեցին մեծ գոհունակությամբ ու խանդավառությամբ։ Հայաստանի մայրաքաղաքում, Լենինականում, Կիրովականում և այլ քաղաքների ու շրջանների ձեռնարկություններում, հիմնարկություններում, կոլխոզներում աշխատավորներն իրենց ջերմ ելույթներում ողջունում են Ժողկոմսովետի որոշումը և իրենց երախտագիտությունն ու գոհունակությունն արտահայտում Սովետական կառավարությանը, հայ ժողովրդի ազատարար մեծ Ստալինին։

Ստորև զետեղում ենք աշխատավորության ելույթները, որ քաղում ենք «Սով. Հայաստան» թերթից (դեկ. 4, 1945 թ.)։

Երևանի Ջերժինսկու անվան Դաշգահագործիքաշինական գործարանի տեխնոլոգ Հ. Դիլանյանը ասաց.

— Սովետական կառավարության պատմական որոշումը անսահման ուրախու-

թյամբ է լցրել մեր սրտերը, Հայրենիքից զրկված մեր բազմաչարչար եղբայրներն ու քույրերը մայր Հայրենիք, Սովետական Հայաստան վերադառնալու հնարավորություն ստացան։ Մենք գրկաբաց կընդունենք նրանց և ձեռք ձեռքի տված կշարունակենք մեր հոյակապ կյանքի կառուցման աշխատանքները։

Ցրեզերագործ ընկ. Գ. Դայանը իր ելույթում ասաց.

— Կատարվեց օտար երկրներում կարիքի ու թշվառության մեջ դեգերող մեր հայ եղբայրների բաղձանքը՝ վերադառնալ իրենց Հայրենիքը՝ Սովետական Հայաստան, որտեղ նրանք լայն հնարավորություններ կունենան ապրելու մեզ նման ուրախ և երջանիկ, խաղաղ ստեղծագործական կյանքով։

Մեխանիկական ցեխի պետ Ռ. Շախմալյանը խոսում է արտասահմանում ապրած իր ծանր կյանքի մասին։ Գալով Սովետական Հայաստան, նրա համար բացվեց աշխատանքի լայն ասպարեզ և այժմ նա ապրում է ունևոր, հանգիստ և ապահով կյանքով։ Նա ջերմորեն ողջունում է սովետական կառավարության որոշումը և շնորհակալություն է հայտնում մեծ Ստալինին արտասահմանում ապրող հայերի Հայրենիք վերադառնալու ցանկությանն ընդառաջելու համար։

— Անչափ ուրախ եմ սովետական կառավարության այս որոշման համար, ասում է խառատ Գ. Ղուլյանը։ Իմ շատ բարեկամներ այժմ գտնվում են արտասահմանում, նրանք միշտ երազել են վերադառնալ իրենց իսկական Հայրենիքը։ Միայն սովետական իշխանության պայմաններում իրականացավ հայրենազուրկ եղբայրների իղձը։ Վերադառնալով Սովետական Հայաստան, նրանք մեզ հետ կկազմեն մի միասնական կոլեկտիվ և կապրեն երջանիկ կյանքով։ Սովետական կառավարությունը հոգ է տանում նրանց վերադարձի և բնակարանային պայմանների մասին։ Մենք մեր անհուն երախտագիտությունն ու շնորհակալությունն ենք հայտնում սովետական կառավարությանը և նրա ղեկավար մեծ Ստալինին հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած ջերմ հոգատարության համար։

Երևանի Մետաքսի գործարանի՝ Ֆրանսիայից ներգաղթած ստախանովական բանվորուհի բրիգադիր Նվարդ Քլյանը ասաց.

— Անսահման է ուրախությունս։ Ժողկոմսովետի այս պատմական որոշումը մեզ հնարավորություն է տալիս արտասահմանում գտնվող մեր տարագիր հայրենակիցներին վերադառնալու իրենց Հայրենիքը։ Ինձ ծանոթ է Հայենիքի կարոտը։ Ես չեմ կարող մոռանալ մեր կառավարության ինձ ցույց տված հոգատար վերաբերմունքը, երբ ես եկա Հայաստան։ Այժմ ես ապրում եմ երջանիկ և ուրախ կյանքով։ Սովետական արևի տակ ստալինյան ոգով դաստիարակվում են իմ երեխաները։ Նրանք իրենց երջանիկ կյանքի համար պարտական են մեծ Ստալինին։

Այնուհետև ելույթ ունեցավ 1929 թվին Հունաստանից ներգաղթած, ստախանովական բանվորուհի Ս. Ափամյանը.

— Խոսք չեմ գտնում արտահայտելու իմ ուրախությունը. հիշում եմ, թե ինչպես ինձ քաշում էր Հայրենիքիս կարոտն ու սերը, իմ իղձը կատարվեց 29 թվին, երբ ես եկա Հայաստան։ Ինձ համար բացվեց նոր, երջանիկ կյանքի մի ուղի, այսօր ես ողջունում եմ հայրենակիցներին և սպասում նրանց տեսակցությանը։

Մեկը մյուսի ետևից ելույթներով հանդես եկան ներգաղթած ստախանովական վարպետ Ն. Շնորհյանը, ստախանովական բանվորուհի Ն. Վարդանյանը և շատ ուրիշներ։ Նրանք բոլորն էլ ողջունում էին սովետական կառավարության պատմական որոշումը։